Ի՞ՆՉ Է ԼԱՐԻՆԳՈՏՐԱԽԵԻՏԸ

Լարինգոտրախեիտը կոկորդի և շնչափողի վիրուսային վարակ է, որը ավելի հայտնի է կեղծ կրուպ անվանմամբ:

Վիրուսը առաջացնում է կոկորդում և շնչափողում շճային այտուց: Վարակումը տեղի է ունենում հիմնականում ցրտեռային ամիսներին:

Ո՞Ր ՆՇԱՆՆԵՐՆ ԵՆ ԲՆՈՐՈՇ ԼԱՐԻՆԳՈՏՐԱԽԵԻՏԻՆ

Հաճախ այն սկսվում է այնպես ինչպես սովորական մրսածությունը: Բնորոշ նշանները հաճախ առաջանում են գիշերը, երեխայի քնած ժամանակ՝

- << հաչոցանման>> հազ,
- ներշնչական ստրիդոր (աղմկոտ ներշնչում),
- դիսֆոնիա (ձայնի խզվածություն),
- շնչառական անբավարարության նշաններ (արագ և մակերեսային շնչառություն):

Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՔ ՏԱՆԸ ԱՆԵԼ, ԵՐԲ ԵՐԵԽԱՆ ՈՒՆԻ ԼԱՐԻՆԳՈՏՐԱԽԵԻՏ

Երբ ձեր երեխայի մոտ առկա է լարինգոտրախեիտի նշաններ, ապա անհրաժեշտ է ցուցաբերել օգնություն օրինակ՝

- Երեխային դուրս բերել փողոց՝ զով և մաքուր օդին,
- Երբեմն օգնում է նաև տաք ջրով լոգանքը,
- Պահպանել ձեր և ձեր երեխայի մոտ հանգստությունը,
- Տալ երեխային ջերմիջեցնող և ցավազրկող պրեպարատներ, օրինակ՝ Պարացետամոլ, Իբուպրոֆեն (այն դեպքում, երբ առկա է բարձր ջերմություն և/կամ ցավ հազալիս)

-Եթե ձեր երեխայի մոտ պահպանվում են ախտանշանները կամ ձեր երեխան ունի հևոց, ապա պետք է դիմել բժշկի:



ԲՈՒԺՈՒՄ

Երբ ձեր երեխայի մոտ հաստատվել է լարինգոտրախեիտ ախտորոշումը, ապա կարող եք երեխային տալ գլյուկոկորտիկոիդային շարքի պրեպարատներ (Դեքսամետազոն, Պրեդնիզոլոն): Այս պրեպարատները նվազեցնում են կոկորդի և շնչափողի այտուցը: Ծանր դեպքերում անհրաժեշտ է ադրենալինով ինհալյացիոն թերապիա: Հոսպիտալացման հարցը որոշվում է՝ կախված տվյալ պահին երեխայի վիճակից:
Բուժումը սիմպտոմատիկ է, հակաբիոտիկները չեն օգնում այս դեպքում, քանի որ հարուցիչը վիրուսն է: Լարինգոտրախեիտը կարող է առաջանալ տարբեր վիրուսներից, ուստի հնարավոր չէ այն կանխարգելել հակավիրուսային պատվաստանյութերի միջոցով:

ԵՐԲ ՊԵՏՔ Է ԴԻՄԵԼ ԲԺՇԿԻ

- Երեխայի մոտ առկա է հևոց,
- Աղմկոտ շնչառություն,
- Չնայած տանը ցուցաբերած օգնությանը երեխայի վիճակը չի կարգավորվում,
- Երեխան հրաժարվում է խմելուց կամ առկա է կլման ակտի խանգարում,
- Երեխան թույլ է,
- Դուք վստահ չեք, որ կարող եք ճիշտ օգնություն ցուցաբերել ձեր երեխային:



ARABKIR
JOINT MEDICAL CENTRE
ԱՐԱԲԿԻՐ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF CHILD AND ADOLESCENT HEALTH
Mamikoninants str. 30, Yerevan, 375014 Armenia
Tel.: (374 1) 236 883, Fax: (374 1) 284 170, E-mail: aramc@arminco.com